

Տեղեկություններ VIDEX համակարգից օգտվելու վերաբերյալ

Հարգելի՛ այցելու,

ողջունում ենք Ձեզ VIDEX առցանց համակարգում, որտեղ Դուք կարող եք մուտքագրել Ձեր տվյալները՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանությունում շենգենյան երկրներ մուտք գործելու նպատակով վիզայի համար դիմելիս:

Մենք ցանկանում ենք առավելագույնս դյուրացնել Ձեր աշխատանքը VIDEX-ում: Դրա համար ստորև Ձեզ ենք ներկայացնում VIDEX-ից օգտվելու և վիզայի դիմումի հետագա ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը:

Խնդրում ենք ուշադիր կարդալ ներկայացվող տեղեկությունները և միայն դրանից հետո սկսել Ձեր դիմումին առնչվող տվյալների ներմուծումը VIDEX համակարգ:

Ո՞ր դեպքերում կարելի է օգտվել VIDEX համակարգից:

VIDEX համակարգից կարելի է օգտվել բացառապես կարճաժամկետ՝ շենգենյան գոտի մուտք գործելու և այնտեղ առավելագույնը 90 օր մնալու համար նախատեսված վիզա (Շենգեն վիզա) ձևակերպելիս:

Երկարաժամկետ այցերի (օրինակ՝ ուսում, աշխատանքային գործունեություն, ընտանիքի վերամիավորում) համար VIDEX համակարգի միջոցով վիզայի դիմում ներկայացնել, ցավոք, հնարավոր չէ: Նման դեպքերում խնդրում ենք դիմել Գերմանիայի Դաշնային Հանրապետության համապատասխան դիվանագիտական ներկայացուցչություն:

Տեխնիկական պայմաններ

VIDEX համակարգով աշխատելու համար Ձեզ անհրաժեշտ են հետևյալ սարքավորումներն ու ծրագրերը.

- Microsoft Windows,
- Firefox 8.0 կամ Internet Explorer IE 8,
- Adobe Acrobat Reader 10,
- տպիչ սարք:

Տվյալների մուտքագրման նախապատրաստություն

Եթե գործընթացն սկսելուց 10 րոպե հետո տվյալները չեն ներմուծվում, բոլոր արդեն մուտքագրված տվյալներն ինքնաբերաբար ՋՆՁՎՈՒՄ ԵՆ: Ուստի խորհուրդ ենք տալիս տվյալների մուտքագրումից առաջ նախապես ի մի բերել ստորև ներկայացվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը.

- Ձեր ճամփորդական անձնագիրը որը
 - պետք է վավեր լինի ծրագրված ճամփորդության ավարտից ոչ պակաս քան երեք ամիս հետո,
 - տրվել է ոչ ավել, քան տաս տարի առաջ (երկարացումը հաշվի չի' առնվում),
- Ձեր ճամփորդության պլանը կամ Ձեր ավիաթռիչքների ամրագրումը,
- Գերմանիայում գտնվելու վայրի հասցեն,
- հյուրանոցի համարի ամրագրման հաստատումը, եթե այդպիսին առկա է,
- հրավեր, եթե այդպիսին առկա է:

Դիմումի լրացման կարգը

Լեզվի ընտրությունը

Ընտրե՛ք այն լեզուն, որով Ձեզ տրվելու են հարցերը: Պատասխանների մուտքագրումն սկսելուց հետո լեզուն այլևս չի կարելի փոխել, այլապես ներմուծված տվյալները կջնջվեն:

Թույլատրվող նշաններ

Խնդրում ենք դիմումը լրացնել ամբողջապես և բացառապես լատինատառ: Այն դիմումները, որոնք կպարունակեն ոչ լատինատառ նշաններ, չեն կարող պահվել և տպվել:

Բացի լատինատառ սովորական նշաններից՝ թույլատրելի են նաև հետևյալները. Ä Ö Ü ß . + - , ' Այն դաշտերում, որտեղ մուտքագրվում է էլեկտրոնային հասցեն, թույլատրվում է նաև @ նշանի կիրառումը:

Ամսաթվերի մուտքագրում

Ամսաթվերի համար նախատեսված դաշտերում խնդրում ենք մուտքագրումը կատարել ըստ գրիգորյան օրացույցի՝ հետևյալ ձևաչափով.

տտտտ-աա-օօ («տարի»՝ 4 թիվ – «ամիս»՝ 2 թիվ – «օր»՝ 2 թիվ): Տարվա, ամսվա և օրվա միջակայքերում անհրաժեշտ է դնել մեջտեղի գծիկ:

Ինչպես դիմումը գրանցել/պահել համակարգչի հիշողության մեջ

Դուք հնարավորություն ունեք լրացված դիմումը գրանցել Ձեր համակարգչի հիշողության մեջ: Դրա համար անհրաժեշտ է մուտքագրել առնվազն Ձեր **ազգանունը** և **ծննդյան թիվը**: Տվյալները պահպանվում են Ձեր համակարգչի հիշողության մեջ առկա այն նիշքապանակում, որտեղ սովորաբար պահպանվում են համացանցից ներբեռնված

նիշքերը (ֆայլերը): Եթե Դուք ցանկանում եք դիմումը գրանցել այլ տեղում, պետք է Ձեր դիտարկչի (browser) մեջ ընտրեք այլ նիշքապանակ:

Ինչպես տպել արտոնագրի դիմումը

Դիմումը հնարավոր է տպել միայն այն դեպքում, եթե այն լրացված է լիարժեք: Անհրաժեշտ է տպել հետևյալ փաստաթղթերը.

- վիզայի համար ներկայացվող դիմումը (խնդրում ենք ստորագրել),
- Ձեր հաստատումը՝ համաձայն «Գերմանիայում կացության իրավունքի մասին օրենքի» § 55, 2-րդ պարբերության 1-ին կետի (խնդրում ենք ստորագրել),
- դիմումի տվյալների գծիկային կողը, որը թողարկում է VIDEX համակարգը:

Ինչպես ամփոփել վիզայի դիմումի համար պահանջվող տվյալների մուտքագրումը

Արտոնագիր ստանալու համար առցանց ռեժիմով դիմում ներկայացնել հնարավոր չէ: Դիմումը ներկայացվում է բացառապես համապատասխան դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական ծառայությունում, որը գործում է դիվանագիտական ներկայացուցչության ենթակայությամբ:

Դիմումը հանձնելիս խնդրում ենք ներկայացնել նաև հետևյալ փաստաթղթերը.

- Վիզայի համար ներկայացվող դիմումը (խնդրում ենք ստորագրել),
- Ձեր հաստատումը՝ համաձայն «Գերմանիայում կացության իրավունքի մասին օրենքի» § 55, 2-րդ պարբերության 1-ին կետի (խնդրում ենք ստորագրել),
- դիմումի տվյալների գծիկային կողը, որը թողարկում է VIDEX համակարգը,
- այլ փաստաթղթեր, որոնք պահանջվում են վիզայի տվյալ տեսակի համար և կցվում դիմումին: Այս մասին տեղեկություններ կարող եք քաղել Գերմանիայի դեսպանության կայքէջում:

Գերմանիայի ո՞ր դիվանագիտական ներկայացուցչությունն է իրավասու Ձեզ համար.

Ձեզ համար իրավասու է համարվում Գերմանիայի այն դեսպանությունը, որի հյուպատոսական տարածքում ներառված է Ձեր բնակության վայրը: